

УДК: 55(038)

КРАТКИЕ СООБЩЕНИЯ

Ա. Ն. ՔՈՉԱՐՅԱՆ

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՀԱՅԵՐԵՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՐԱՆԸ

Դժվար է գերազնահատել մշակված ու գիտականորեն հիմնավորված, ընդհանուր ճանաչում ու առօրյա կյանքում կիրառում գտած տերմինների դերը գիտության յուրաքանչյուր բնագավառի զարգացման ու առաջընթացի գործում:

Մենք հավակնություն չունենք խոսելու այն մասին, թե ինչ վիճակում է այդ հարցը բնական գիտությունների բազմաթիվ այլ բնագավառներում: Մեր նպատակն է համառոտ կերպով կանգ առնել հայերեն երկրաբանական տերմինարանի վրա:

Ցավոք, պետք է նշել, որ մինչև օրս հրապարակի վրա գոյություն չունեն ուս-հայերեն և հայ-ռուսերեն լիարժեք երկրաբանական բառարաններ, էլ չենք խոսում բացատրական բառարանների մասին:

Տարիներ առաջ հրատարակված պոլիտեխնիկական փոքրածավալ բառարանը շատ հեռու է բավարար լինելուց, էլ չենք խոսում նրանում տեղ գտած սխալների ու վրիպումների մասին: Հրատարակվել են նաև երկրաբանական գիտությունների շատ նեղ ճյուղերին (հորատման գործ, լիոնադործություն և այլն) վերաբերող փոքրածավալ բառարաններ, որոնք նշանավորում են երկրաբանական բառարանակազմության առաջին քայլերը, անկասկած շատ հետաքրքիր են, սակայն չեն ընդգրկում երկրաբանությունը ամբողջությամբ վերցրած:

Ներկայումս, գիտակցելով երկրաբանական ծառայության մեջ գոյություն ունեցող այդ բացը, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտը ձեռնամուխ է եղել ուս-անգլերեն-հայերեն երկրաբանական բացատրական բառարանի կազմման աշխատանքներին, ընդ որում բառարանում բերվում են ուսերեն (այբբենական կարգով) ու անգլերեն տերմինները և առանձին հասկացություններ, իսկ դրանց բացատրությունները տրվում են միայն հայերեն լեզվով: Ստեղծվել է հեղինակային կոլեկտիվ, որի մեջ ընդգրկվել են երկրաբանական գիտությունների ինստիտուտի և Նրևանի բուհերի մի շարք որակյալ մասնագետներ:

Բառարանը կազմելու համար հիմք է հանդիսանում 1973 թ. «Недра», հրատարակչության կողմից Մոսկվայում լույս տեսած սովորածավալ երկհատորանոց «Геологический словарь»-ը որոշ կրճատումներով, որոնք հիմնականում վերաբերում են հնացած, ներկայումս չօգտագործվող տերմիններին ու հասկացություններին, պատմական մանրամասներին և այլն: Սակայն բառարանում առանձնակի տեղ են գրավում այն տերմինները, որոնք արտացոլում են Հայաստանի երկրաբանությունը և նրա ընդերքի օգտակար հանածոները:

Քանի որ բառարանը կազմելուն ղուգընթաց անհրաժեշտություն է զգացվում ստեղծելու մի ամբողջ շարք նոր տերմիններ, ապա չափազանց կարևոր

է լեզվաբանների ու տերմինաբանների մշտական օգնութիւնը այդ կարևոր գործում:

Իսկ այժմ, համապատասխան բառարանների բացակայութեան պայմաններում, երկրաբանական տերմինարանի վիճակը հեռու է բարձր լինելուց: Երկրաբանները հայերեն գրում, կարդում և խոսում են, սակայն «դժվարութեամբ» են հասկանում միմյանց, կամ էլ հայերեն լեզուն աղճատում են, զգալիորեն տգեղացնում և նրա մեջ անհարկի ներմուծում հիմնականում ռուսական և այլ լեզուներից փոխառնված բազմաթիվ տերմիններ ու հասկացութիւններ, երբեմն էլ փոխում նրանց իմաստը:

Վերը բերված դիտողութիւնները հաստատելու համար բերենք մի քանի օրինակ.

Մենդավայր — ռուսական «месторождение» տերմինի բառացի թարգմանութիւն, որը պետք է փոխարինվի «հանքավայր» տերմինով, քանի որ շատ հանքավայրեր ներկայումս տեղադրված են ոչ թե իրենց ծննդավայրում, այսինքն առաջացման վայրում, այլ տասնյակ, երբեմն հարյուրավոր կիլոմետր հեռավորութեան վրա: Վկայակոչենք Հայկական ՄՍՀ տարածքի մի շարք օրինակներ: Դիլիջանի մոտ, Աղստե գետի ոսկեխառն ավազները, որոնք սկսել են շահագործվել մեր նախնիների կողմից դեռ հնագույն ժամանակներից, առաջացել են ոչ թե տեղում, այլ բերվել են այդ գետի ավազանը հարավից եզրափակող Փամբակի և Արեգունի լեռնաշղթաներից: Արգականի մարմարները «ծնվել են» ծովի հատակին, հետագայում տեկտոնական շարժումների հետևանքով բարձրացել են Երկրի մակերևույթ: Անուշահամ և հանքային ջրերի բազմաթիվ աղբյուրներ գոյանում են ոչ թե իրենց ելքերի մոտ, այլ ավելի հեռու վայրերում և այլն:

Հզորութիւն, կարողութիւն, ռուսական «мощность» տերմինի անհաջող բառացի թարգմանութիւն. այն պետք է մերժվի և փոխարինվի «հաստութիւն» տերմինով, քանի որ խոսքը գնում է պարզապէս շերտի, երակի կամ այլ երկրաբանական մարմնի հաստութեան մասին: Ուրիշ բան է էլեկտրականի, գործարանի կամ այլ արտադրական միավորի հզորութիւնը: «Հզորութիւն» տերմինը թերևս կարելի է թողնել երկրաբանական այս կամ այն իրադարձութեան մասշտաբները ցույց տալու համար:

Խտանյութ — ռուսական «концентрат» տերմինի նույնպէս անհաջող թարգմանութիւնն է. այն պետք է փոխարինվի «հարստանյութ» տերմինով, քանի որ այն նշանավորում է հանքանյութերի ոչ թե խտացումը, այլ նրանց հարստացումը, նյութ ասելով, իհարկե պետք է հասկանալ կորզման ենթակա օգտակար հանածոն (մոլիբդեն, պղինձ, ոսկի, երկաթ, կապար և այլն):

Շերտագրութիւն — լատինական «stratum» (շերտ) և հունական «στρω» (գրում եմ), բառերի թարգմանութիւն, սակայն նպատակահարմար է օգտագործել «շերտադրութիւն» տերմինը, քանի որ այն արտահայտում է շերտերի դրվածքը, շարվածքը, դիրքը, փոխհարաբերութիւնները, որոնք բնութեան, մեջ օբյեկտիվ կերպով գոյութիւն ունեն, անկախ նրանից, թե որևէ մեկը նկարագրում է նրանց, թե ոչ:

Հանքաքար — ռուսական «руда» բառի փոխարեն օգտագործվում է լեռնային արդյունաբերութեան աշխատողների կողմից, սակայն «руда»-ն պետք է թարգմանվի «հանքանյութ» քանի որ այն ավելի լայն հասկացութիւն է, քան հանքաքարը, որը, մեր կարծիքով, նույնպէս կարելի է պահպա-

նել: «Հանքանյութը» կարող է հանդես գալ ոչ միայն քարի, այլև ավազի, ջրի, գազի և այլ վիճակներով:

Գրունտ—ռուսերենից հայերենի մեջ ուղղակի ներմուծված տերմին. պետք է փոխարինել հայկական «գետին» բառով: Գետինները կարող են լինել ապառաժային, փափուկ, կապակցված, փխրուն և այլ տարբերակների ձևով: Գետինը դա յուրաքանչյուր ապարի պայմանական կիրառական (ինժեներա-երկրաբանական) անվանումն է: Այդ տերմինից էլ սերվում են «գետնաջրեր» և այլ հասկացություններ:

Հանքագործ—հաճախ այսպես են կոչում լեռնագործներին (горняки), մինչդեռ հանքագործները կաղմում են լեռնագործների ավելի մեծ բանակի միայն մի մասը. լեռնագործը, բացի հանքանյութ հանելուց, անցկացնում է ջրատեխնիկական, ճանապարհային թունելներ, քար է կտրում, ավազ հանում և այլն, գործողություններ, որոնք ոչ մի կապ չունեն հանքանյութերի շահագործման հետ:

Լեռնային գործ—հաճախ թարգմանում են ոչ թե «горное дело» այլ «հանքային գործ»: Մինչդեռ վերջինս «լեռնային գործ» ավելի լայն հասկացության միայն մասնավոր դեպքն է. Արփա-Սևան ջրատարի լեռնային աշխատանքները ոչ մի կապ չունեն հանքային գործի հետ: «Հանքային գործ» տերմինը գուցե պետք է պահպանել միայն մետաղային հանքավայրերում կատարվող աշխատանքների համար: Նույնը վերաբերում է նաև «լեռնային» տերմինի «հանքային»-ով փոխարինելու կապակցությամբ կազմված «հանքային դանգված» «հանքային աշխատանքներ» և այլ տերմինների: Ի միջի այլոց, «լեռնային գործ» տերմինը նույնպես պետք է հնացած համարել, քանի որ այն եթե հին ժամանակներում, հավանաբար, կատարվել է առավելապես լեռներում, ասենք, Ուրալում, ապա այժմ կատարվում է ոչ միայն լեռներում, այլ նաև ձորերում, հարթավայրերում, նույնիսկ ջրավազանների հատակին: Այդ իսկ պատճառով որոշ մասնագետներ առաջարկում են այն փոխարինել ավելի լայն ընդգրկում ունեցող «ընդերքային գործ» տերմինով: Մեր կարծիքով «լեռնային գործ» տերմինը կարելի է թողնել, քանի որ այն շատ խոր արմատներ է գցել իրական կյանքում:

Հորան—«шахта» բառի մեր կարծիքով ճիշտ թարգմանության փոխարեն հաճախ անհիմն կեղծով օգտագործում են «հանքարան», «հանքահոր» տերմինները: Հորանը կարող է ոչ մի կապ չունենալ «հանք» հասկացության հետ. կարելի է նորից օրինակ բերել Արփա-Սևան ջրատարի կամ Երևանի մետրոյի հորանները, որոնք առհասարակ ոչ մի կապ չունեն հանքաբանության հետ և այլն:

Կախված կող և պառկած կող—ռուսական «высечный бок и лежащий бок» տերմինների ճիշտ, սակայն բացասի թարգմանությունն է. նույնատակահարմար է օգտագործել «վերնակող և ներքնակող» տերմինները: Այստեղ խոսքը վերաբերում է ապարների թեք ընկած շերտերի կամ երկրաբանական այլ մարմինների (երակներ, դաշկաներ և այլն) վերնակողին և ներքնակողին:

Բազմաթիվ տերմիններ են կազմված «гео» «երկիր» բառից՝ геология, геоморфология, геофизика, геохимия և այլն, որոնք հաճախ օգտագործվում

են առանց հայերեն թարգմանվելու, մինչդեռ պետք է թարգմանել երկրաբանություն, երկրաձևաբանություն, երկրաֆիզիկա, երկրաքիմիա և այլն:

Վերը նշվեց միայն ուսերենից ոչ ճիշտ թարգմանված տերմինների կամ նրանց ոչ ճիշտ կիրառման փաստերի մասին, սակայն գոյություն ունի հարցի մի կարևոր կողմ ևս. խոսքը վերաբերում է հանրապետության տարածքի տեկտոնական զոնայությանը առհասարակ և տեկտոնական տարրերին մասնավորապես: Օրինակ, Փամբակ-Ջանգեզուրի երկրաբանա-կառուցվածքային զոնան ունի նաև այլ անվանումներ՝ Ախտայի զոնա, Ծաղկունք-Ջանգեզուրյան զոնա և այլն, Սևան-Ամասիայի զոնան կոչում են նաև Սևան--Աքերայի զոնա ընդլայնելով նրա սահմանները, Ջանգեզուրի խորքային խզվածքը՝ հուստուփ-Գիրաթաղյան, Դեբաքլուի խզվածքը՝ Տաշտունյան և այլն: Կան տեղանունների քմահաճ օգտագործման այլ բազմաթիվ փաստեր ևս, որոնք խառնաշփոթություն են մտցնում երկրաբանական գրականության մեջ:

Կարելի է բերել բազմաթիվ նոր օրինակներ, սակայն նշվածներն էլ միանգամայն բավական են ցույց տալու համար, թե ինչ վիճակում է գտնվում հայերեն երկրաբանական տերմինարանը, որը կարիք է զգում շուտափույթ մաքրագործման: